# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 197-Ա

## . ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.11.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 174-Ա ՈՐՈՇՄԱՆ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի ավագանու 28.11.2024թվականի << 2025 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 174-Ա որոշման հավելվածում կատարել լրացումներ և փոփոխություններ.

1) հավելվածի 20-րդ տողից հետո ավելացնել նոր 21-րդ տող հետևյալ բովանդակությամբ.

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | աշխատակիցների թվաքանակը | պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը | ծածկագիրը |
|---|---|---|---|---|---|---|
| 21 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 350000 | 350000 | 2.3-5 |

2) 21-ից 47 համարները վերախմբագրել 22-ից 56:

3) Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի աղյուսակի ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 27 | 27 | 7658800 | 7658800 |

4) Աղյուսակի վերջին՝ ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 64,5 | 71 | 15006600 | 16031100 |

2. Արենի համայնքի ղեկավարին՝ մեկշաբաթյա ժամկետում դիմել ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 26.12.2017 թվականի «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 365-Ա որոշմամբ հաստատված հրամանում փոփոխություններ կատարելու առաջարկությամբ. այն է՝

1) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» 26.12.2017 թվականի թիվ 365-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ մասի, 2.3-րդ կետում ավելացնել նոր 5-րդ ենթակետ.

«ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ», ծածկագիր՝ 2.3-5,

3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**